

## Ուսուցման ծրագիր

Դատավորների թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժնի համալրման նպատակով որակավորման ստուգմանն ուղղված արագացված նախապատրաստական դասընթացների:

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է դատավորների թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժնիների համալրման նպատակով որակավորման ստուգմանը, դատախազների և քննիչների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով անցկացվող մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող անձանց (այսուհետ՝ Ունկնդիրներ) ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, դասավանդվող առարկայական կուրսերի արժեքները:
2. Ծրագիրը մշակվել է Արդարադատության ակադեմիայի կողմից՝ «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 7-րդ մասի, 19-րդ հոդվածի, Արդարադատության ակադեմիայի Կառավարման խորհրդի 22.12.2021 թվականի թիվ ԿԽ-010/21/3 որոշմամբ հաստատված ««Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից ձեռնարկատիրական գործունեության իրականացման» կարգի, ինչպես նաև Ունկնդիրների համապատասխան մասնագիտական կարիքների բավարարման հաշվառմամբ:
3. Ծրագրի նպատակն է Ունկնդիրների շրջանում՝ արդարադատության իրականացմանը նպաստող մասնագիտական հմտությունների ձևավորումը, ինչպես նաև Ունկնդիրների գիտելիքների և աշխատանքային ունակությունների զարգացումը:
4. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով՝ լսարանային ուսուցման եղանակով՝ առավելագույնը 10 Ունկնդրից բաղկացած խմբերով: